Ճ.

Շատ մը տեղեկութիւններ կու տայ Հ. Թէոդորոս զանազան նիւթերու շուրջ, որոնց կարգին կը գտնենք նաեւ Ստեփաննոս վարդապետ Լեհացւոյ (Ռոշքայի) մահուան գուժը։ Եթէ ստուգիւ հետագայ նամակին գրութեան թուականին (1740ին) վախճանած համարինք՝ դեռ տարի մը երկարած կ՚ըլլայ անոր արդիւնաշատ կեանքը[1].

Օ։ Ց։ Բ։

Գերյարգելոյ, և. Գերիմաստի Տեառն Մխիթարայ Աստուածաբանուրեան Վարդապետի, և. արքազունեղի Հօրդ մերում ընդհանրական, արարուր անկեալ՝ զոտս համբուրելով մատուցանեմ զողջոյն, և այլն։

.... մինչ ես էի Կեղայ՝ եկն բարդուղիմէոս վարդապետն ի Կեղայ յանձնարարական գրով Նունցիոսին, և կամի բնակիլ անդ, ոչ որպէս հոգաբարձ քահանայ, այլ իբրև զեկն, որում կայսրն վճարէ յամէ ամ զ100 տուգաթ, և այժմ վճարեալ է նմա զհաշիւ երից ամաց զ300 տուգաթ։ Աստէն մեծ նուազութիւն զոյ հացի և գինւոյ, զի եղեամն և հեղեղք անձրեւաց ապականեալք են զարտորայս և զայգիս։ Քանզի 16 օխայ ցորեանն, որ լատիներէն ասի Metreta, *այժմ յաւուրս հնձոց, յորժամ ցորեանն է առատ՝ 16 օխան կամ մի* metretaն *վաճառի 6 լիտրէ, այսինքն 24 թռայբը..։ Ի կողմանէ խաղաղութեան, ոչինչ հաւաստի լուր զոյ, քանզի ինքեանք իսկ զինուորական պաշտօնատարք տարաձայնին ի միմեանց. քանզի ոմանք ասեն. Լինի հաւաստի խաղաղութիւն ի մէջ ալամանին և տաճկին. իսկ ոմանք ոգեն զհակառակն...։ Բազումք մաճարք սեպուհք խնդրեն զիս գնալ առ նոսա առ ի լինիլ զաբէլլան. բայց ես պահելով զխրատս և զկանոնս Գերյարգելութեանդ՝ ոչ կամիմ գնալ առ նոսա։ ... Ստեփաննոս Վարդապետն Լեհացին վախճանեցաւ։ Եւ Տէր սիմէոնն կամի գնալ անդ, և ասաց ինձ, զի եթէ կամիցիմ՝ գնայցեմ և ես ընդ նմա։ Ես իրաւի յօժարութեամբ գնայցէի, թէ ունիցէի զհրաման ի Գերյարգելութենէդ...։ Յոյժ ուրախացայ յորժամ լուայ զաւարտումն չինուածոց մենաստանին...։ Վեր. Տէր Մինաս Աւագէրէցն Կեղայու իբրև լուաւ յինէն, թէ վախճանեալ իցէ Խաչատուր Վարդապետն, հրամայեաց հնչեցուցանել զզանգակս, և զձայնաւոր Պատարագ ասաց վասն հոգւոյ նորա. նաև եղբայրն իւր Վեր. Տէր Սիմէոնն։...*

Նուաստագունեղ Ծառայ
Հ. Թէոդորոս Յովաննիսեան
Կրօնաւոր ի կարգէ Սրբոյն Անտոնի Աբբայի

Յամի Տեառն 1740
Հոկտեմբերի 25
ի Կեղայ

ՃԱ.

Ստեփաննոս Ռոշքայի երկասիրութիւններէն ամենէն կարեւորն ու յարգին կրնանք համարել Հայ–Լատին և Լատին–Հայ իր ընդարձակ երկհատորեան Բառարանը։ Անոր կազմութեան նկատմամբ հետեւեալ վաւերաթուղթը մասնաւոր արժէք և կարեւորութիւն մ՚ունի, որովհետեւ մեր նամակագիրը յոյժ շահեկան ու մանրամասն տեղեկութիւններ կու տայ։

---

1. Զարպհանալեան՝ մահուան թուական նշանակած է 31 հոկտ. 1739 (տե՛ս Բ. Նոր Մատենագրութիւն, 1905, էջ 337)։